

4255

1869

18-1907

891.71

4-31

12003

89.7/-2
4-3.3

ՎԱՐՉԱԾ ԱՄՈՒՍԻՆ

ՎՅԵԼԻԼ ՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ԹՈՒՍԵՐԵՆԻՅ

ԱՐՁԱԿ ՏԵՐ—ՄԱՐՈՒԴԵԱՆՑ

— — — — —

ԳԻՆՆ Է 30 ԿՈՂ.

ԵՐԵՒԱՆ

Տպարան „ԼՈՅՍ“ Արշակ Յակովբեանյի և Ընկ.

891.71

4-31

պ

Հանձնարար:

ՎԱՐՉԱԾ ԱՄՈՒՍԻՆ

ՎՅՈՒՄՆԻՆԻ ՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

ԹԱՐԳԱՆՆԵՑ ԹՈՒՍԵՐԵՅԻՑ / 11-1922

ԵՐԵՎԱՆԻ ՏԵՐ-ՄԱՐԴԱԿԱՆՆԵՑ



ԵՐԵՎԱՆ

ՏՊԱՐԱՆ „ԼՈՅՍ“ ԱՐԴ. ՏԱԿՈՎԱՆՆԵՑ ԵՒ ՈՐԻԲ.

1907 թ.

Настоящий водевиль разрѣшенъ на основ. 84 ст. Уст. Ценз., изд. 86., за отсутствіемъ Главноначальствующаго, Помощникомъ его къ представленію на театрахъ Кавказскаго края Марта 5 дня 1891 г. г. Тифлисъ.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

1. ՄՈՌԴԱՂԵՒ ԴՕՐԻՄՕԴՕՆԻ ԱՆՏԻՊԵՒԻԶ, կալվածատէր. 50 տարեկան
2. ՍԵՐԳԷՅ ՊԵՏՐՈՎԻԶ, նորա եղբորորդին, ջահիլ աղամարդ
3. ԱԿԱԿԵՒ, ԱԿԱԿԻՅ ԱԿԱԿԵՒԻԶ, աննշան անձնաւորութիւն, 40 տարեկան
4. ԽԱՐՕՂԵՎԱ, ԵԼԵՆԱ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՆԱ, երիտասարդ օրբեւայրի
5. ԼԻՋԱ, Խարօղեւի աղախինը:



Дозволено цензурою г. Тифлисъ 5 Марта 1891 года.

21099.60

Բեմը ներկայացնում է մի սենեակ, խորքումը երկու դռներ՝ ամեն մինը մի կողմում. ձախ կողմում լուսամուտ: Սենեակի մէջտեղը՝ աւելի ղէպի աջ մի դիւան, բազկաթոռներ, մի փոքրիկ սեղան կանանց պարապմունքի համար: Ձախ կողմում բիւրօ, խորքումը մի մեծ հայելի:

ՏԵՍԻՒՆ Ա.

Խարօղեւ (բազմոցի վրայ նստած՝ դիրք է կարդում) Լիզա (օր կարգի է բերում սենեակը):

Խարօղեւ.- (Դիւրքը դնելով), Այո, տխուր է օրբեւայրու կեանքը: Ակամայ նախանձումես ուրիշներին, բոլորը ուրախանում են, ամենքը կարծես ապրում են մէկը միւսի համար, միմիայն ես եմ, որ ոչ ոքի պէտք չեմ ու կարծես բոլորովին անպէտք ու աւելորդ եմ... Չէ, ես էլ մարդու կը գնամ, անպատճառ կը գնամ, ես կը ամուսնանամ:

Լիզա.- Տիրուհի...

Խարօղեւ.- Ի՞նչ ես ուզում:

Լիզա.- Գիտէ՞ք թէ երբեմն ի՞նչ մտքեր են յղանում իմ գլխում:

Խարօղեւ.- Ձորօրինակ...

Լիզա.- Ինչո՞ւ դուք մարդու չէք գնում:

Խարօղեւ.- Բայց ո՞ւմն առնեմ:

Լիզա.- Ոնց թէ ում. թէկուզ հէնց Սերգէյ Պետրովիչին:

Խարօղեւ.- Այն թեթեւամտին:

21099.60

Լիլա.- Բաս միթէ Ակակներն...

Խարօշեա.- Ի՞նչն է պակաս, նա փեսացու չէ...

Լիլա.- Փեսացու է, իսկ փեսացու... հա, հա, հա, օրէնք քսան անգամ մենք պատահում ենք և նա միշտ միեւնոյնն է կրկնում թէ՛ ասա տեսնեմ Լիլա, ինչպէս, արդեօք հանգիստ անցկացրեց այս գիշեր... ք, ք, ք, կարող եմ աւելացնել, քո տիրուհին: Լիլա... ողջունիր իմ կողմից՝ կարող եմ աւելացնել, քո տիրուհուն: Հա, հա, հա... Լաւ մարդ է, ոնց չէ, ... Բայց այ ինչ ունիմ ասելու Սերգէյ Պետրովիչին, նա կարգին տղամարդ է՝ համ ջահիլ, համ սիրուն, և ինչպէս սիրուն էլ երգում է:

Խարօշեա.- Դու ճրտեղից գիտես:

Լիլա.- (Աչքները խոնարհելով) Գիտեմ... մի անգամ ես ակամայ լսեցի, բայց, տիրուհի, ինչքան լաւ է նորա սենեակներում:

Խարօշեա.- Բայց նա շատ աղքատ է կարծեմ:

Լիլա.- Է՛հ, ինչ արած որ աղքատ է: Ա՛յ, Ակակեր թէև հարուստ էլ է, բայց ինչ օգուտ, նա պառաւ է, տգեղ ու անճոռնի:

Խարօշեա.- Միեւնոյն ժամանակ ծանրաբարոյ մարդ է, լաւ զիրք ունի հասարակութեան մէջ:

Լիլա.- Է՛հ, տիրուհի, դուք հօ հասարակութեան մէջ ունեցած զիրքի հետ չէք ապրելու, այլ ապրելու էք մարդու հետ, և վերջապէս ո՞վ է ձեզ ասել, որ Սերգէյ Պետրովիչը աղքատ է: Նա իսկի էլ աղքատ չէ, անցեալ օրը ինձ նորա ծառան պատ-

մում էր, որ նա ունի մի հարուստ հօրեղբայր. որ նորան շատ փող է ուղարկում:

Խարօշեա.- Ուրեմն նա ինչո՞ւ այդպէս անկանոն է վճարում իւր տան վարձը:

Լիլա.- 2՝ գիտեմ, դէպք եղած ժամանակ կը հարցնեմ:

Խարօշեա.- Հարկաւոր չէ, ազատիր ինձ խնդրեմ այդ մանրամասնութիւններից, աւելի լաւ է գործդ կատարես, մաքրիր սենեակը (Հիգլան սկսում է սենեակը մաքրել, Խարօշեաւն ինքն իրան): Եւ իրաւ որ զարմանալի մարդ է այս Ակակը. նորա մտքում մի բան կայ. քանիցս անգամ սկսել է, բայց ոչ մի ժամանակ էլ չի վերջացրել: Զորօրինակ կըսկսի մի բան ասել, խոստովանութեան նման և յետոյ խօսքը կտուրը կը գցի, խօսակցութիւնն էլ կը փոխի կամ եղանակի և կամ դորա նման մի բանի վրայ, բայց նա ինձ վրայ պսակուելու միտք ունի, անպատճառ ունի: Այսօր էգուց ի հարկ է կորոչէ, սիրտ կանէ և կառաջարկէ ինձ, է՛հ, ինչ անենք որ, ես էլ նորա առաջարկութիւնը կընդունեմ... Աստուած իմ, և ինչո՞ւ չընդունել, այսպէս մենակ մնալով վերջապէս կը գժուի մարդ հոգսից ու դարդից:

Լիլա.- (Նուշում է շոտաւոճառի մէջ թաղում):

Խարօշեա.- Գժուել ես, ինչ է:

Լիլա.- Հա, հա, հա, այ քեզ ծիծաղելի մարդ...

Խարօշեա.- Ո՞վ է ծիծաղելի:

Լիլա.- Սերգէյ Պետրովիչը. տնից այնպէս դուրս վազեց,

որ կարծես թէ տունը կրակ լինի ընկած... վագեց, վագեց ու վայր ընկաւ, հա, հա, հա, (զաւագը քաշուած եւ):

Խորշեալ.- Լսում ես:

Լիլա.- Վազում եմ (շտապով դուրս ե գնում):

ՏԵՍԻԼ Բ.

ԽԱՐՕՇԵՒԱ, ՅԵՏՈՅ ՍԵՐԳԷՅ ՊԵՏՐՈՎԻՉ և ԼԻԶԱ

Խորշեալ.- Երեւի Ակակիյ Ակակեիչն է, այսօր հինգշաբթի է և նա միշտ այդ օրն է այցելութիւն անում:

Լիլա.- Սերգէյ Պետրովիչն է:

Խորշեալ.- Ի՞նչ է ուզում:

Լիլա.- 2ը գիտեմ:

Խորշեալ.- Զարմանալի այցելութիւն:

Սերգ. Պետր. (Քաշտուկով մոտենալ եւ խօսուած ե կամուս), Երեւոյ Ալեքսանդրովնա, բարե ձեզ, ներեցէք, որ ես ձեզ անհանգիստ արի:

Խորշեալ.- Ի՞նչ էք կամենում:

Սերգ. Պետր. Ես ձեզ հետ առանձին բան ունիմ խօսելու:

Խորշեալ.- Լիլան, մեզ միայն թող (Լիլան գնում ե):

Սերգ. Պետր. (Լիլայի գնալուց յետոյ գլխարկը դնում ե սեղանի վրայ եւ յսնկաւ շոգոտ ե) Երեւոյ Ալեքսանդրովնա, խղճացէք անբախտիս վրայ, աղատեցէք ինձ մահից:

Խորշեալ.- Այս ի՞նչ է նշանակում:

Սերգ. Պետր. (Թաշկինակը հանելով և լացի ձայնով) փրկեցէք ինձ. այսօր իմ հօրեղբայրը գալու է:

Խորշեալ.- Է, ինձ ինչ, որ գալու է:

Սերգ. Պետր. Ձեզ, իհարկէ, Ձեզ ոչինչ, իսկ ինձ... ինձ... իմ հօրեղբայրը շատ չար և բարկացող մարդ է... և... ես կորայ բոլորովին:

Խորշեալ.- Ես ոչինչ չեմ հասկանում:

Սերգ. Պետր. Այս ըրպէին կը հասկանաք... միայն սկզբից ասացէք, կարո՞ղ եմ Ձեզ վրայ յոյս դնել. (Բարձրանում և մարբում է շորերը):

Խորշեալ.- Բանն ինչո՞ւմն է վերջապէս:

Սերգ. Պետր. Երեւոյ Ալեքսանդրովնա (նորից շոգում է), մի քանի օրով խնդրեմ իմ կինս լինէք:

Խորշեալ.- Ի՞նչ... ինչ ասացիք...

Սերգ. Պետր. Երեւոյ Ալեքսանդրովնա...

Խորշեալ.- Խնդրեմ այդպիսի յիմար հանաքներ չանէք, եթէ ոչ՝ իսկոյն դուրս կերթամ:

Սերգ. Պետր. Ի՞նչ անեմ, գնում էք գնացէք... իսկ իմ հօրեղբայրը այսօր կգայ..... նա շատ չար և բարկացող մարդ է... և... (նորից շոգում է) իմ աղանեակ... օղնեցէք... (տալիս է նորան մի հեռագիր), ահա, կարդացէք:

Խորշեալ.- (կարդում է), Վերջապէս ես վճռեցի Ձեզ հետ տեսնուել, իմ սիրելի որդիք և վաղը ժամի 12ին կը լինիմ Մոսկովայում: Ձեր Դօրիմօղօնդ Մորգաշե: Ի՞նչն է այդպէս Ձեզ անհանգիստ անում:

Սերգ. Պետր. (Բարձրանում է շոգած տեղից և շորերը մարբում է) ինչը... այ թէ ինչը, այս հեռագիրը ուղիղ 24 ժամ ուշացել է, հօրեղբայրս կը գայ այսօր, հէնց այս ըրպէիս. (նորից շոգում է), իմ ապագան Ձեր ձեռքումն է, իմ ամբողջ վիճակը...:

Խարօշեալ.- Երբորդ անգամն եմ ասում Ձեզ, որ ես ոչինչ չեմ հասկանում:

Սէրգ. Պէպր. (Բարձրանում է չորած տեղից և ցոյց է տալիս հեռագիրը) Ահա ուշադրութիւն դարձրէ՛ք այս խօսքերիս վերայ՝ «սիրելի որդիք» հասկացմբ:

Խարօշեալ.- Ոչինչ:

Սէրգ. Պէպր. Վերջապէս կարճ ասած... (ընդհատում է).

Խարօշեալ.- (Ընդհատելով), Դուք խաբէլ էք Ձեր հօրեղբորը:

Սէրգ. Պէպր. (հառաչելով), Այո՛:

Խարօշեալ.- Ինչո՞վ:

Սէրգ. Պէպր. Չատ ու շատ բաներով, զորօրինակ մի անգամ շատ կարևոր էր փողը, և ես նորան գրեցի, որ... որ... ես...

Խարօշեալ.- Միք ամաչիւ, շարունակեցէ՛ք:

Սէրգ. Պէպր. Որ ես պսակում եմ:

Խարօշեալ.- Դուք էլ ի հարկէ չը պսակուեցիք:

Սէրգ. Պէպր. Չը պսակուեցի... յետոյ .. յետոյ...

Խարօշեալ.- Յետոյ ի՞նչ... շարունակեցէ՛ք:

Սէրգ. Պէպր. Յետոյ ես նրան գրեցի, որ ինձ, ինչպէս ընտանիքի տէր մարդու, հարկաւոր է լաւ տուն, լաւ սարք ու կարգ, կահ կարասիք: Նա դորա համար էլ փող ուղարկեց:

Խարօշեալ.- Յետոյ ի՞նչ...

Սէրգ. Պէպր. Յետոյ էլ այն, որ այնուհետև Կալիֆօրնիայի ոսկու հանքերը ինձ համար պատրաստ էին և շատ էլ ծիծաղելի կլինէր, եթէ ես նրանից չօգտուէի, ևս առաւել, որ հօրեղբայրս ոտքացաւով բռնւած հիւանդ էր ու ես կտրծում էի, որ նա ոչ մի ժա-

մանակ սիրտ չի անիլ իր կալուածքից դուրս գալ, երբորդ նամակումս կողմնակի կէրպով հասկացրի որ ընտանիքիս մի անգամն էլ աւելացաւ, նա դարձեալ 1000 ըուրլի ուղարկեց նորա մկրտութեան ծախքի համար:

Խարօշեալ.- Սերգէ՛յ Պետրովիչ...

Սէրգ. Պէպր. Այո՛, յետոյ չորրորդ նամակը, երկրորդ մկրտութիւնը, նա կրկին փող ուղարկեց և վերջապէս ահա նա ինքն է դալիս (Թաշկինակը մօտեցնումէ աչքերին), որ գրկի և համբուրէ «իր սիրելի երեխաներին»:

Խարօշեալ.- Սերգէ՛յ Պետրովիչ, չէ՞ որ այդ լաւ բան չէ:

Սէրգ. Պէպր. Չատ վատ է, անպիտան բան է, խաբեբայութիւն է, բայց... բայց... Ելենա Ալէքսանդրովնա, այդպիսի յանցանքը կարելի է համեմատել ատամնաւոր անիւի հետ, որ եթէ մի անգամ փաթաթվում է մարդու փեշերին՝ քարչ է տալիս նորան հեռու և շատ հեռու... պսակուելուց անցայ ես մկրտութեան, առաջին մկրտութիւնից երկրորդ մկրտութեան ելն. եւ: Ձեզ վրայ է իմ ամբողջ յոյսը, եղէք իմ կինը, խնդրում եմ, թէ՛ կուզ միայն հէնց այսօր:

Խարօշեալ.- Է, դուք ծիծաղում էք:

Սէրգ. Պէպր. Տէր իմ Աստուած, միթէ ես այժմ ծիծաղելու սիրտ ունիմ, բայց եթէ դուք ճանաչէիք իմ հօրեղբօրը, ճշմարիտ որ կը խղճայիք ինձ, նա ինձ հում հում կուտէ, և ինչ դժուար բան է ձեզ համար իմ խնդիրքը կատարելը, չէ՞ որ միայն հէնց այսօր է:

Խորհրդանշան - Ինչ բարի էք զուր է։...

Սերգեյ. Պետր (Հասարակական) Այո, բարի, շատ բարի եմ մինչև անգամ, բայց իմ հորեղբայրը... ո՛հ, մագերս փշաքաղվում են, երբ գլխիս գալիքն եմ մտածում... ո՛հ, ինչ պիտի լինի արդեօք....:

Խորհրդանշան - Է՛հ, դուրս վերայ շատ էլ մտածել հարկաւոր է։

Սերգեյ. Սերգեյ-Ալեքսանդրովնա, այդքան էլ քարասիրտ մի՛ լինիք, ինձ միք տանջիլ, չէ՛ որ զուր մի բարի, ազնիւ և հրաշալի կին էք։ Ով որ այդքան գեղեցիկ է՝ նա չի կարող չարասիրտ լինել, և ես հաստատ համոզուած եմ, որ զուր չէք մերժիլ իմ խնդիրը։ Դուք իմ կնոջ դերը կը խաղաք, իսկ ես այդ ժամանակ հորեղբորս բերանը կը քաղցրացնեմ ու ամէն բան լաւ կը լինի։ Հորեղբայրս կը տեսնի, որ թէև ես նորան խաբել եմ, բայց չըքաւորութեանս պատճառաւ ինձ ապրել էք հարկաւոր, կերակրուել մի բանով։ Յետոյ ես ինձ համար մի պաշտօն կը գտնեմ և հորեղբորս յարաբերութիւններն դէպի ինձ՝ կը մնան նոյնը, ինչ որ սուաջ էին և այս բոլորը կախաւծ է ձեզանից իմ թանկագին Սերգեյ-Ալեքսանդրովնա, զուր իմ փրկութեան խարխիւն էք։

Խորհրդանշան - (Խնքն իրան) Մեղքս գալիս է սրա վերայ։

Սերգեյ. Պետր. Ես տեսնում եմ, որ զուր դեռ ևս քաշվում էք։

Խորհրդանշան - Բայց Սերգեյ-Պետրովիչ....:

Սերգեյ. Պետր. (ուրախ, ուրախ), Դուք համաձայն էք։

Խորհրդանշան - Հեշտ է ձեզ այդպէս ասելը...

Սերգեյ. Պետր. Իսկ ձեզ համար աւելի հեշտ է կատարելը։

Խորհրդանշան - Բայց եթէ ես համաձայն չը լինեմ....:

Սերգեյ. Պետր. Ինչ անեմ... այն ժամանակ ես կը կորցնեմ իմ հորեղբոր դէպի ինձ ունեցած սէրը. համակրութիւնը.. կը զրկուիմ նորա օգնութիւնից... և ստիպւած կը լինիմ կամ գետի մէջ խեղտուիլ կամ ինձ սպանել (կամսաց կամսաց գնում եմ դէպի դռուր) մնաք բարով, Սերգեյ-Ալեքսանդրովնա, ոտով, գլխով կը կորցնէք ինձ։

Խորհրդանշան - Սպասեցէք։

Սերգեյ. Պետր. (ուրախ վագրում եմ նրա մօտ) Դուք վճռեցիք։

Խորհրդանշան - Ասե՛նք թէ վճռեցի, բայց երեխայքը ղրտեղից գտնենք։

Սերգեյ. Պետր. Գտնեմ... կգտնեմ... ո՛հ, իմ բարի, իմ աննման (մի քանի անգամ համբուրում է նորա ձեռքը)։

Խորհրդանշան - Դէ՛հ, թողէք, բաւական է։

Սերգեյ. Պետր. Օ՛հ, կարծես մի ահագին սար մէջքիցս վայր ընկաւ... հա, հա, հա, ամուսին գտայ... այժմ (նայում է ժամացոյցին), համարեա 12-ն է, գնամ երկաթուղու կայարանը և նրան այստեղ բերեմ։

Խորհրդանշան - (վախեցած), ինչպէս թէ այստեղ։

Սերգեյ. Պետր. Բաս ո՛ւր տանեմ, ես ինչպէս կարող եմ թոյլ տալ, որ նա իջնի մի որ և իցէ հիւրանոցում, չէ՛ որ ես այժմ տուն ու տեղ ունեմ, կին ունեմ, սարք ու կարգ ունեմ...

Խորհրդանշան - Բայց այստեղ անկարելի է։

Սերգեյ. Պետր. Ես արդէն ստացել եմ Ձեր համաձայնութիւնը։

Խորհրդանշան - Սերգեյ Պետրովիչ...

Սերգեյ. Պետր. (ափանջները խցիւով), Ոչինչ չեմ ուզում լսել...

Խարոշեալ.- Լսեցէք խնդրեմ:

Սէրժ. Պէպր. 2եմ կարող (վախշումէ):

Խարոշեալ.- (նորա յետևից), Սերգէյ Պետրովիչ, յետ դարձէք, ես համաձայն չեմ, Սերգէյ Պետրովիչ, լսեցէք...

ՏԵՍԻԼ Գ.

ԽԱՐՈՇԵԻԱ, ՅԵՏՈՅ ԼԻԶԱ.

Խարոշեալ.- Գնաց, տեսար... Էհ, ինչ արած, պէտք էր նորան օգնել, թէ չէ՝ ուղիղ որ կը գնար ու կը խեղտուէր... և վերջապէս ինչ վատ բան կայ սրանում, չէ որ միայն այսօրուան համար է, (հառաչելով), անխ, ափսոս որ միայն մի օրուան համար, (մի քիչ լռելուց յետոյ), բայց հետաքրքիր է իմանալ, թէ այս բոլորից ինչ դուրս կգայ, չէ որ սա մի շատ ծիծաղելի կատակ է, այնուամենայնիւ հարկաւոր է պատրաստել Լիզային և կարենոր պատուէրները տալ նորան. (կանչումէ) Լիզա, Լիզա...

Լիզա.- (ներս մտնելով), Ի՞նչ էք հրամայում, տիրուհի:

Խարոշեալ.- Ահա թէ ինչ. այս բոլորիս այստեղ պիտի գայ Սերգէյ Պետրովիչի հօրեղբայրը, նախագգուշացնումեմ քեզ, որ ինչ էլ որ նա քեզ հարցնելու լինի՝ ոչինչ չ'պէտքէ պատասխանես:

Լիզա.- Ձատ բարի, տիրուհի:

Խարոշեալ.- Ինչ որ էլ այստեղ պատահելու լինի՝ ոչ մի բանի էլ չզարմանաս:

Լիզա.- Ձատ բարի:

Խարոշեալ.- Տես, բերնիցդ խօսք չը թուցնես:

Լիզա.- Հանգիստ եղէք. (ինքն իրան), այստեղ, ինչպէս երևում է, մի բան կայ:

Խարոշեալ.- Իսկ այժմ գնա խոհանոցը... (բեմի խորքից լսվումէ Մարգարէի ձայնը, գողեր, աւաղակներ, դուրս կորէք, դուրս, ասում եմ), Երևի նա ինքն է, գնամ իմ սենեակը, (գնում է դէպի ձախ):

ՏԵՍԻԼ Գ.

ՄՈՐԴԱՇԵԻ և ՍԵՐԳԷՅ ՊԵՏՐՈՎԻՉ.

Սէրժ. Պէպր. (գուռը բանալով), համեցէք, համեցէք սիրելի հօրեղբայր, այս տեղ համեցէք:

Մարգարէ.- (ձանապարհի շրեքով, լայն վերաբեկումով, ուսին ճանապարհորդական պայուսեակ, մի ձեռքն չեմօղան, միւս ձեռքին մի բորձ, ահագին չիբուխ և թութունի տոպրակ), Ո՛ւֆ, ո՛ւֆ, հազիւ եմ շունչ քաշում, Սերգէյ, սրտեղ դարսեմ սրանք:

Սէրժ. Պէպր. Ա՛յ, այստեղ, սիրելի հօրեղբայրս... (ուզումէ ինքը դարսել):

Մարգարէ.- (Զթողնելով), Սպասիր, ես ինքս կը դարսեմ, դու նեղութիւն մի կրիր, (դարսում է բոլորը սենեակի մէջտեղը, երեսը թաշկինակով սրբում է և նայում է եղբորդու վրայ):

Սէրժ. Պէպր. (Ուզում է նորան գրկել), իմ հօրեղբայր, իմ սիրելի հօրեղբայր...

Մարտաշէն.- (չ'թողնելով), Սպասիր, դեռ վաղ է, (խիստ), ինչ-
պէս ես ապրում:

Մերժ.Պէպր. Չատ լաւ, իմ հօրեղբայր:

Մարտաշէն.- Պսակուէլ ես:

Մերժ.Պէպր. Պսակուել եմ, սիրելի հօրեղբայր..

Մերժ.Պէպր. Սիրուն է կինդ:

Մերժ.Պէպր. Չատ սիրուն է:

Մարտաշէն.- Երկու երեխայ ունիս:

Մերժ.Պէպր. (ծամծմելով), Երկու... իմ հօրեղբայր:

Մարտաշէն.- Բայց ինչո՞ւ ինձ ընդառաջ չեկար երկաթուղու
կայարանը:

Մերժ.Պէպր. Հեռագիրն ուշացել էր, հօրեղբայր:

Մարտաշէն.- Սուտ չէս ասում:

Մերժ.Պէպր. Սուտ չեմ ասում, հօրեղբայր:

Մարտաշէն.- (գրկելով նորան), Գէհ, այժմ բարով տեսանք, (համ-
բուրումէ), ինչ մեծացել ես, կատարեալ տղամարդ
ես դառել... իմ հանգուցեալ եղբօր կենդանի
պատկերն է, Աստուած լուսաւորէ հոգին, իսկ և
իսկ Մորդաշէն ես, բայց մի քիչ լղար ու գունատ
ես:

Մերժ.Պէպր. Գործերս, հօրեղբայր, ծառայութիւնս..

Մարտաշէն.- (ձեռքը նորա երեսին քսելով), Հա, հա, հա, գործերս...
հասկանում եմ, զրուստ որ Մորդաշէն ես, բայց
ո՞ւր է կողակիցդ:

Մերժ.Պէպր. Ի՞նչ կողակից:

Մարտաշէն.- (աւագ), Կինդ, քո կինը:

Մերժ.Պէպր. Իմ կինը... ա... ա... ա... այո՛, այո՛, ես կարծեմ
ձեզ ասացի, որ հեռագիրը ուշացել էր... ես

ստացայ մի քանի ըռպէ սրանից առաջ, իսկ իմ
տիկինը, այսինքն կինս, երեւի դորա մասին ոչինչ
չի իմացել, և... և.. գնացել է փողոց բան ու
ման աւննելու:

Մարտաշէն.- Գովում եմ, գովում, երեւի լաւ տանտիկին է, ես
հաւանում եմ այդ. չիբուխս լցրու և խօսենք, ա՛յ,
այնտեղ է թամբաքուի տոպրակը, (նայում է շուրջը),
լաւ կարգի ես գցել տունդ... ճշմարիտ որ լաւ
է (նստումէ), փահ, փահ, ինչ լաւ զիւաններ են
Սերգէյ, պարտք հօ չունիս:

Մերժ.Պէպր. Ո՞վ, էս:

Մարտաշէն.- (բարկացած) իհարկէ դու, ոչ թէ ես: Մտաբերի՛ր,
Սերգէյ, որ ոչ մի Մորդաշէն ոչ մի ժամանակ
պարտք չի ունեցել: Լաւ է մարդ մի կտոր ցա-
մաք հաց ունենայ, բայց սեփական քրտնքով
վաստակած: Մի կրակ տուր, (կպցնումէ չիբուխը և
ծուխն արձակում), նստիր, խօսենք, բայց լաւ է,
լաւ, այստեղ քեզ մօտ, շատ լաւ է, մինչև ան-
գամ ես... չէի սպասում (ձեռքը շփում է նորա ծեօ-
տին), դէհ, ասա տեսնեմ, գո՛հ ես դու ինձնից:

Մերժ.Պէպր. (համբուրելով նորա ձեռքը), Ախ, իմ հօրեղբայր, եթէ
դուք իմանայիք...

Մարտաշէն.- (ձեռքը քաշելով), Սուս... ձայնդ... ինձ համար մահ
է, ես շնորհակալութիւն լսել չեմ սի՛րում, միայն
թէ դու բաղտաւոր լինիս (ծխում և թողնում է ծուխը),
է, ինչպէս է, բաղտաւոր ես:

Մերժ.Պէպր. (չփութաւած), Ի՞նչպէս ասեմ, հօրեղբայր, մի կերպ
օրերս անցնում է:

Մարտաշէն. (բարկացած), ինչ, ինչ ասացիր...

Սէրգ. Պէտր. ես ասացի, որ բաղտաւոր եմ, մինչև անգամ չատ բաղտաւոր:

Մարտաշէն. - Լաւ է, որ այդպէս է, եթէ ոչ քիչ էր մնում, որ վախենայի... Իսկ կողակիցդ ինչպէս է, բարբի է...

Սէրգ. Պէտր. Ո՛ւմ կողակիցը:

Մարտաշէն. - Իհարկէ քո:

Սէրգ. Պէտր. Ինչպէս որ պատահի (կամայ), մեր տղայ, բանս բուրդ է:

Մարտաշէն. - (բարկացած), ինչ, ինչ ես ասում:

Սէրգ. Պէտր. (կամայ), Միանգամայն խելագարվում եմ:

Մարտաշէն. - Սերգէյ, ինչո՞ւ չես պատասխանում:

Սէր. Պէտր. (շուրջը նայելով), ինչպէս փախչեմ:

Մարտաշէն. - Չատ կարելի է նախանձոտ է:

Սէրգ. Պէտր. Ո՛չ... այսինքն այ՛ո, շատ, շատ նախանձոտ (կամայ), էլ չեմ դիմանում:

Մարտաշէն. - Կընչանակէ դու նորան տեղիք ես տալիս: Միտքող պահիր, Սերգէյ, Մորդաշեններից ոչ մէկը երբէք իր կնոջը չի խաբել: Ի՞նչ է, ինչ ես պտոյտ գալիս:


Ս. Պետր. - Նայում եմ... որոնում եմ... կարծես... (կամայ), չէ, լաւ է, ծիւլեմ:

Մարտաշէն. - Ի՞նչ ես որոնում:

Ս. Պետր. - Ա... ա... ա... հեռագիրը... այսինքն... կարծես... նա եկաւ:

Մորդաշէն. - Ո՛վ եկաւ:

Ս. Պետր. - Ա... ա... հեռագիրը... այսինքն կլինա... հօրեղբայր... կինս:



Մորդաշէն. - Գնա՛, նորան ասա, որ ես եկել եմ, և ներխայտցն էլ բեր:

Ս. Պետր. - Այս րոպէիս, հօրեղբայր, գնումեմ (կամայ), Տէր Աստուած, սրա վերջը ինչ պիտի լինի, (գնում է):

ՏԵՍԻԼ Ե.

ՄՈՐԴԱՇԵՆ (միայն),

Գէ՛հ արի ու մարդկանց խօսքերին հաւատա: Գիւղում ինձ ամէնքն էլ ասում էին. «Գործիմիդօնտ Լնտիպեիչ, գնացէք Մոսկուայ, բայց կտեսնէք, որ Ձեր եղբօրդին չէ ամուսնացեյ, Անա Ձեզ, թէ չէ ամուսնացել իշխանի պէս է ապրում. և թէ հանգուցեալ եղբայրս, Աստուած հոգին լուսաւորէ, նայէր իր որդու վրայ, ինչպէս նորա սիրտը կուրախանար (նայում է շուրջը), ինչ եղաւ նա, ոտքով գլխով կարծես թէ կորաւ, Սերգէյ, Սերբօժկա:

ՏԵՍԻԼ Զ.

Մորդաշէն, Սերգէյ Պետրովիչ և Խարօշեան.

Սէր. Պէտր. (Խարօշի դռան մօտ), Ելե՛նա Ալէքսանդրովնա, ի սէր Աստուծոյ, խնդրումեմ... (բարձր), ահա ես, իմ հօրեղբայր (ցոյց տալով Ելենի վրայ) ահա և իմ... այսինքն... կինս:

Մարտաշէն. - (ուզում է նորան գրկել), Արի, արի իմ գիրկս, իմ թանկագին հարս:

Խարոշեալ.- (որին Սերգէյը հրում է), Հօրեղբայր...

Սերգ. Պէտր. (կամաց նորան), Աւելի սիրով, քաղաքավարի...

Խարոշեալ.- Իմ հօրեղբայր, սիրելի հօրեղբայր...

Մարտաշեալ.- (գրկելով և ճակատը համբուրելով), Իմ սիրելի, իմ
թանկագին, որքան գեղեցիկ ես. (յանկարծ մի կողմն
է քաշում Սերգէյ Պետրովիչին), Այս ինչ է, յիմար,
դու գրել էիր, որ նա չէկ է, իսկ սա աւելի քան
թուի է:

Սերգ. Պէտր. (չփոթուելով), Ըմ .. բմ... ես .. այսինքն .. հա, սը-
խալուել էի, իմ հօրեղբայր. սէրը կուրացրել էր:

Մարտաշեալ.- Հա, հա, հա... սխալուել էիր... չէ որ այժմ եօթ-
ներորդ երկնքումն ես:

Սերգ. Պէտր. (մի կողմ), թող գետինը պատուի ու ինձ ներս
տանի:

Մարտաշեալ.- Դէհ, արի ինձ մօտ, սիրելի Մարիամ ջան...

Խարոշեալ.- (զարմացած), Մարիամ...

Սերգ. Պէտր. Ի՞նչպէս թէ Մարիամ...

Մարտաշեալ.- (տաքացած) Ո՞նց թէ ինչպէս, չէ որ դու ինձ գրել
էիր, որ սորա անունը Մարիամ է:

Սերգ. Պէտր. (կամաց) վայ, վայ, վայ... (նորան) հա, հա, հա ..
ճշմարիտ է... միայն... հա, հա, հա, չէ որ իմ
կինը մի քանի անուն ունի:

Մարտաշեալ.- (զարմացած) Ի՞նչ...

Սերգ. Պէտր. Այո՛, իմ հօրեղբայր, մի քանի անուն, պաշտօնա-
պէս ես նրան անուանում եմ Մարիամ, Մաշա,
Մաշինկա, Մաշուրօշկա, իսկ ոչ պաշտօնապէս
Ելենա, Լիւլիւշիշկա, Լենօշկա:

Մարտաշեալ.- (մղղում է) ... Լաւ անուն է, Աստուած լուսաւորէ
քո տատիդ հոգին, նրա անունն էլ էր Ելենա,

դէհ, մօտիկ Լենօշկա: (բարկացած) Ինչո՞ւ չես գալիս:
Սերգ. Պէտր. (հրելով նրան) Ի՞նչը Աստուծոյ ..

Խարոշեալ.- (կամաց) Ի՞նչ բարկացող է, (նրան), ես այստեղ եմ,
հօրեղբայր:

Մարտաշեալ.- Եկ այստեղ նստենք. (նստում են գիւանի վրայ, Սերգ.
Պետրովիչը գիւանի յետեր), մօտ նստի՛ր, (բարկացած)
ինչ է, վախենում ես ինձանից:

Խօրէշեալ.- (մօտենալով նրան), Չեմ վախում, հօրեղբայր, ահա
մօտեցայ...

Մարտաշեալ.- Ա՛յ, այդպէս, լաւ, լաւ, Էհ, դէհ այժմ պատմի՛ր,
գո՛հ ես դու սրանից:

Խարոշեալ.- Ո՞ւմնից:

Մարտաշեալ.- (բարկացած), Ո՞նց թէ ումնից, իհարկէ ինձանից չէ:

Խարոշեալ.- Գոհ եմ, հօրեղբայր, շատ գոհ եմ:

Մարտաշեալ.- Երբէք չէք կռվում:

Խարոշեալ.- Ի՞նչպէս կարելի է, հօրեղբայր:

Մարտաշեալ.- Չատ լաւ, այդ ինձ ուրախացնում է, դուք շատ
լաւ տուն ու տեղ էք եղել, ճշմարիտ որ շատ
լաւ: Վաղուց է, որ ես կամենում էի տեսնել ձեր կեանքը
և ահա վերջապէս Աստուած յաջողեց: Սերգէյ,
ինչ ես մտածման մէջ ընկել:

Սերգ. Պէտր. Ե՛ս... ոչինչ... իմ հօրեղբայր:

Մարտաշեալ.- Ուրախ ես, որ ես եկել եմ:

Սերգ. Պէտր. Դէհ, ա, ա, (կամաց), ինչ է գալու գլխիս:

Մարտաշեալ.- Իսկ դու, Լենօշկա, դու ուրախ ես:

Խարոշեալ.- Այո՛, այո՛:

Մարտաշեալ.- Այս ինչ բան է, մէկը դէ, դէ, ա... ա... է անում,
միւսը այո՛, այո՛, էլ ուրիշ բան չունիք խօսելու
ձեր հօրեղբոր հետ:

Սերգ. Պետր. Ի՛նչ ես ասում, իմ հօրեղբայր ի՛նչպէս թէ ոչ ի՛նչ... դեռ շատ բան կայ խօսելու հօրեղբայր, դուք չէք կամենում հանգստանալ (Խարոշեին) ի սէր Աստուծոյ, մի բան խօսացէք:

Մարտաշե.- (բարկացած), Սատանան գիտէ, թէ այս ի՛նչ բան է... ինչո՞ւ ես դու հանգստանալու համար հարցնում, եթէ հանգստանալ ուզէի՝ մի թէ կը քաշուէի, երբէք, այլ ուղղակի վեր կը կենայի ու կը գնայի... դուն էն ասա, ո՞ւր են երախայրը:

Խարոշե.- (շփոթված) Երախայրը:

Սերգ. Պետր. (յուսահատուած), Երախայրը. (Խարոշեին), սիրելի անուշիկս, ո՞ւր են երախաները, (կամաց) էտ էր պակաս:

Մարտաշե.- (մզգում է) ... Սերգէյ, ո՞ւր են նրանք:

Սերգ. Պետր. (շուրջը նայելով), Ա՛յ, այս բոպէին, հօրեղբայր, այս բոպէին, (կանչում է) երեխայր, երեխայր:

Մարտաշե.- Տղայ և աղջիկ են:

Սերգ. Պետր. Տղայ և աղջիկ:

Մարտաշե.- Ո՞րն է մեծը:

Սերգ. Պետր. (մզգալով) Ըմ... Ելենա Ալէքս... Ելենօշկա, որն է... Ը... Ը... Ը... որը առաջ ծնունց:

Խարոշե.- Հօրեղբայր, մեծը տղաս է:

Մարտաշե.- Իսկ և իսկ հայր կը լինի, չէ...

Սերգ. Պետր Մօր նման է, հօրեղբայրս:

Մարտաշե.- Իսկ աղջիկը:

Սերգ. Պետր Նա էլ ինձ նման է:

Մարտաշե.- Էս ի՛նչ բան է, ձեզանում ամէն բան թաւա է, ի՛նչպէս է դրանց անուններն:

Սերգ. Պետր. Անունները... իրաւ Լինօշկայ տնուններն ի՛նչ են:

Խարոշե.- Ի՛նչ են: դուք... այսինքն դու լաւ գիտես, թէ

ինչ է:

Սերգ. Պետր. Այո՛, այո՛, ճշմարիտ... ես պիտի լաւ իմանամ: Մարտաշե.- (ցատկելով), Այս ի՛նչ է, դուք ձեր երեխաների անունները չէք իմանում:

Սերգ. Պետր. Գիտենք, սիրելի հօրեղբայր, բաս չենք իմանում, մի թէ կարելի է չիմանալ... Յովհաննէս և Մարիամ:

Մարտաշե.- (ինքնիրեն), Ջարմանալի է, շատ զարմանալի:

Սերգ. Պետր. (Խարոշեին), Ելենա Ալէքսանդրովնա, օգնեցէք:

Խարոշե.- (առանձին շեշտելով), Բայց ձեր հօրեղբայրը շատ լաւ մարդ է:

Մարտաշե.- Իսկ ո՞ւր են նրանք, այսինքն երեխաները:

Սերգ. Պետր. Ուր են... իրաւ, Լենօշկա, ո՞ւր են մեր երեխաները (կամաց), բոլորովին ուժից ընկայ:

Խարոշե.- Ո՞ւր են, ես կարծում եմ պար... սիրելի ամուսին, որ դու աւելի լաւ պիտի իմանաս:

Սերգ. Պետր. Այո՛, այո՛... և իրաւ որ... ձեր հեռագիրը իմ հօրեղբայր...:

Մարտաշե.- (ընդհատելով), 24 ժամ ուշացաւ:

Սերգ. Պետր. Այո՛, հօրեղբայր, իսկ եղանակը այնպէս գեղեցիկ է, արեգակը փայլում է, թռչունները ծվլում են, լուսինը, այսինքն, ոչ թէ լուսինը, այլ երեխաները գնացել են ման գալու... Ը... Ը... դայեակի հետ... բայց կարելի է դուք էլ, հօրեղբայր, ցանկանում էք զբօսնել, չէ որ դուք թաւա օդի սովոր մարդ էք:

Մարտաշե.- (կամաց), 25, այստեղ մի բան կայ, ճշմարիտ որ մի բան կայ (նրան), այո՛, սովոր եմ... միայն ես այժմ յոգնած եմ:

Սէրգ. Պէտր. Կարելի է ցանկանում էք քնել, հանգստանալ:

Մարտաշէ.- Կը քնեմ, կը քնեմ, (Սերգ. Պետրովիչը ուզում է նրան տեղից բարձրացնել), միայն երբ որ ժամանակը կը գայ, իսկ դու այժմ գնա և երեխաներին այստեղ բեր (բարկանալով), էլ ի՞նչ ես կանգնել:

Սէրգ. Պէտր. (քրտինքը սրբելով՝ տխուր), Գնում եմ, հօրեղբայր, գնում եմ (կամոց), անի, Աստուած, որ տեղից ճարեմ ես (գնում է),

Մարտաշէ.- (Խարօշկին), Իսկ դու, հարս ջան, հրամայիր մէկին որ շորերս մաքրի:

Խարօշէ.- Այս բոպէիս, հօրեղբայր, (գնում է):

ՏԵՍԻԼ Է.

ՄՈՐԴԱՇԵԻ ՅԵՏՈՅ ԼԻԶԱ.

Մարտաշէ.- (երկար նայում է նրանց յետեից և յետոյ խփում ճակատին), Բաս ես Մորդաշէր չեմ լինի, թէ որ այստեղ մի բան չը կայ... այստեղ մի գաղտնիք, գաղտնիք կայ... բաւական է... ոչինչ չեմ հասկանում, թող Աստուած հոգիս առնի՝ թէ բան եմ հասկանում (միջոց), բայց գեղեցիկ կին է, ինձ պատահէ՛ր՝ կը պսակուէի, Սերեօփէն լաւ է գտել, բայց էլի (մտածմունքի մէջ է ընկնում), մի բան կայ, ճշմարիտ որ կայ... թէ կուզ ինձ սպանեցէք, բայց էլի ոչինչ չեմ հասկանում:

Լիզա.- (մտնելով), Պարոն, ձեր շորերը հարկաւոր է սրբել:

Մարտաշէ.- Ի՞նչ, շորերս... այո՛, այո՛... այս բոպէիս (նայելով

նրան), երևում է, որ դու շատ ճարպիկ աղջիկ ես (մատով կանչում է նրան), մօտ եկ, սիրելիս, անունդ ի՞նչ է:

Լիզա.- Լիզա:

Մարտաշէ.- Լիզա, (ձեռքով շփում է նրա երեսը), շատ սիրուն աղջիկ ես... (կամոց), արի մէկ ես սրան թափ տամ, հարձ ու փորձ անեմ:

Լիզա.- Ձեր շորերը տուէք, պարոն:

Մարտաշէ.- Դու առաջ էն ասա, վաղո՛ւց ես ծառայում պարոնների մօտ:

Լիզա.- Ի՞նչ պարոնների:

Մարտաշէ.- (բարկացած), Ո՛րեց թէ ի՞նչ պարոնների, իհարկէ Մորդաշէների մօտ:

Լիզա.- (լուում է):

Մարտաշէ.- Ինչո՞ւ ես լուում:

Լիզա.- Ես չեմ լուում, պարոն:

Մարտաշէ.- (տաքը քեանին խփելով), վաղո՛ւց ես ծառայում Մորդաշէների մօտ:

Լիզա.- Բաւական ժամանակ է:

Մարտաշէ.- Քո պարոնները վաղո՛ւց են պսակուած:

Լիզա.- Ի՞նչ պարոններ:

Մարտաշէ.- Եղբօրս որդին, իմ եղբօրս որդին:

Լիզա.- (լուում է):

Մարտաշէ.- (բարկացած), բողազումդ բան է մնացել ինչ է, թէ՛ կատուն լեզուդ կերել է:

Լիզա.- Ո՛չ:

Մարտաշէ.- Դէ որ ոչ՝ կատուի պոչ, էլ ինչո՞ւ չես պատասխանում:

Լիզա.- (լուում է):

Մարտաշէն.— (բարկացած), Միմեանց հետ հաշտ են ապրում,
սիրում են միմեանց, համբուրվում են:

Լիլա.— Ո՛վքեր:

Մարտաշէն.— (ոտքը քետին խփելով), Ովքեր, իհարկէ կտրան
վրայի ծտերը չէ, այլ եզբօրս որդին իր կնոջ
հետ:

Լիլա.— (լուում է):

Մարտաշէն.— (համերութիւնը կորցնելով), թո՛ւ, համբ ես դու, ինչ է:

Լիլա.— Ե՛ս, բոլորովին ոչ (գուրս է փախչում):

ՏԵՍԻԼ Ը.

ՄՈՐԴԱՇԵՆ ՄԻԱՅՆ

Այս տեղ անպատճառ մի բան կայ, մի թէ եզ-
բօրս որդին ինձ խաբում է: Ծ... Ծ... Ծ... եթէ
այդպիսի բան լինի՝ կը հրժարուեմ, երեսս կը
դարձնեմ նորանից. թող Աստուած իմ հոգին
առնի՝ թէ որ երբ և իցէ իմ ոտս այս տան
չեմքը կտխէ... (բարձր), լսի՛ր, իմ սիրելի... (յետ նա-
յելով՝ տեսնումէ ներս մտնող Ակակին, այս ինչ հրէչ է:

ՏԵՍԻԼ Թ.

ՄՈՐԴԱՇԵՆ ԵՆ ԱԿԱԿԵՆ

(Ակակը հագնուած է զարմանալի՜ կերպով, ահագին օձի-
քով, մազերը յետև սանրած, երեսը ստվերած, ակնոցով, որ
անդատար ցած է իջնում քթի վրայ: Մտնում է անվստահ,
հանում է հրկնակօշիկները, կարքով դարսում է անկիւնում,
նոյնպէս և զօնդիկը, հանում է վերարկան, թափ է տալիս
նոյնպէս կարգին ծալում է, ուղղում է մազերը, սկզբից
երկար ժամանակ զարմանալով նայում է Մորդաշէնի վրայ,
յետոյ ձեռքով սրբում է զլիւարկը, և երկուսն էլ երկար
միջոց բարևում են միմեանց):

Մարտաշէն.— (թքելով) Ի՛նչ յիմարն է, ինչպէս վիզը չէ յոգնում
(նրան) ո՛ւմ ունիմ պատիւ տեսնելու:

Ակակ.— Ակակիյ Ակակիչ Ակակ:

Մարտաշէն.— (մզզում է), Չատ ուրախ եմ...:

Ակակ.— Կարող եմ աւելացնել, այստեղի կալուածատէր...:

Մարտաշէն.— Չատ ուրախ եմ... խնդրեմ (ցոյց է տալիս բազկաթոռը)

Ակակ.— (ուղղելով ակնոցը), Ո՛ւմ հետ ունիմ պատիւ խօսելու:

Մարտաշէն.— Ես... հօրեղբայրն եմ:

Ակակ.— Հօրեղբայրը, (բռնելով նրա ձեռքը), հօրեղբայրը:

Մարտաշէն.— Այո՛, հօրեղբայրը:

Ակակ.— Ելենա Ալէքսանդրովնայի:

Մարտաշէն.— Իսկ և իսկ (լցնելով չիբուխը), խնդրեմ նստէք
(կամաց), բոլորովին յիմար է (տաքացած), պէ նս-
տէք է...:

Ահալէ.- (խոր գլուխ տալով), Ջնորհակալ եմ, 'ի սրտէ շնորհակալ եմ, (կամաց), ինչ գեղեցիկ դէպք է, սորա միջնորդութեամբ, կարող եմ աւելացնել, ես աւելի հեշտութեամբ կարող եմ ստանալ եւեւնա Ալէքսանդրովնի ձեռքը:

Մարդաշէ.- (շիբուիսը վառելով), Լենօչկան զբաղուած է, այս րոպէին կը գայ, (նստում է), խնդրեմ:

Ահալէ.- (անհամարձակ և սրբելով գլխարկը), Ջատ շնորհակալ եմ ձեզանից... դուք այնքան բարի էք...:

Մարդաշէ.- (բարկացած), Վերջապէս դուք պիտի նստէք թէ ոչ... սատանէն ձեզ տա.... (հանգստանալով), գործով էք եկել:

Ահալէ.- (նստելով բազկաթոռի ծայրին), Այո', գործով, և մինչև անգամ, եթէ կարելի է այսպէս ասել, շատ մեծ նշանակութիւն ունեցող և նշանաւոր գործով: Կարող եմ աւելացնել մեծ գործով: Երևի եւեւնա Ալէքսանդրովնան ձեզ ասած կը լինի իմ մասին:

Մարդաշէ.- Ձեր մասին:

Ահալէ.- Այո, իմ մասին:

Մարդաշէ.- Բոլորովին ոչինչ:

Ահալէ.- Ջատ ափսոս, իսկ ես, տեսնում էք. ինչպէս բացատրեմ Ձեզ... ես վերին աստիճանի անհամարձակ մարդ եմ, բաշուող և միևնոյն ժամանակ... (մզգոում է):

Մարդաշէ.- (ձայնը բարձրացնելով), Ի՜նչ է պատահել ձեզ, պիտի ասէք Ձեր խօսքը թէ ոչ:

Ահալէ.- (վախեցած), Իսկոյն, այս րոպէիս (երեսը սրբում է և հազում):

Մարդաշէ.- Պատրաստ էք:

Ահալէ.- Պատրաստ եմ (սպասելուց յետոյ), ես չքաւոր, բայց ազնիւ ծնողների որդի եմ, իմ հայրը իւր հօրից յետոյ, որը կարող եմ աւելացնել, ունէր նմանապէս հայր...:

Մարդաշէ.- (ընդհատելով), Երևի մայր էլ:

Ահալէ.- (մի քիչ բարձրանալով), Բարեհաճեցիք ճշմարիտ նկատելու:

Մարդաշէ.- (կամաց), Յիմար է, բոլորովին յիմար:

Ահալէ.- Ի՜նչ բարեհաճեցիք ասելու...:

Մարդաշէ.- Ես ասում եմ շարունակեցէք, այո, շարունակեցէք:

Ահալէ.- (նորից հաղալով) Իմ հայրը, կարող եմ աւելացնել...:

Մարդաշէ.- (ընդհատելով), Լսէք պարոն՝ աւելացնելանց, չի կարելի արդեօք առանց աւելացնելու:

Ահալէ.- (կամաց), Ի՜նչ զարմանալի մարդ է

Մարդաշէ.- Ձեզ ի՜նչ է հարկաւոր (Ահալէր անորոշութեան մէջ շարժում է գլխարկը) (բարկացած), ի՜նչ էք համենում:

Ահալէ.- (անհամարձակ վեր է կենում շփոթուած), Բարեհաճեցէք տեսնելու, մի տարի առաջ ես քաշուեցի եւեւնա Ալէքսանտրովնի տունը, երկրորդ յարկը, վարձում եմ երկու սենեակ և մի նախասենեակ, իսկ խոհանոց չունիմ, որովհետև անընտանիք լինելով՝ տանը չեմ ճաշում: Տան վարձը սկզբից եմ վճարում:

Մարդաշէ.- Գովելի է:

Ահալէ.- Այս տեղ ես պատահեցի մի անձնաւորութեան, որը չարդեց և կորող եմ աւելացնել՝ զբաւեց իմ սիրտը: Այդպիսի գեղեցիկ կին ես բոլորովին չեմ տեսել:

Մարդաշէ.- Ո՛վ է այդ կինը:

Ահա՛հեւ.- (անհամարձակ), Յանդգնում եմ աւելացնելու... Ելե-
նա Ալէքսանդրովնան:

Մարտաշեւ.- Հա, հա, հա, ուշացել էք պարոն, շատ էք ուշացել:

Ահա՛հեւ.- Իմ սէրը, կարող եմ աւելացնել, անսահման է,
իմ սիրտը...:

Մարտաշեւ.- (բարկացած) Ձեզ ասում են, որ ուշացել էք:

Ահա՛հեւ.- Այո՛, բայց կէս տարի առաջ իմ յոյսերս կրկին
յարուժիւն առան:

Մարտաշեւ.- Ի՞նչ, ի՞նչ, յարուժիւն առան:

Ահա՛հեւ.- Ելենա Ալէքսանդրովնան սկսեց ինձ ընդունել,
կարող եմ աւելացնել, երբեմն երեկոները... բայց
ես այնպէս անհամարձակ եմ...

Մարտաշեւ.- Ի՞նչ... իմ հարս Լինօշկան իրեն թոյլ տուեց...

Ահա՛հեւ.- Նորան յայտնի է իմ գրութիւնը, իմ կարողու-
թիւնը... Ը... Ը... կարող եմ աւելացնել-իմ գրու-
թիւնը...

Մարտաշեւ.- (բարկացած), Լճու, Լենօշկան երբէք իրան թոյլ
չի տալ, երբ նա մարդ ունի:

Ահա՛հեւ.- Կարող եմ աւելացնել, նորա մարդը, կէս տարի
է, որ գերեզմանումն է:

Մարտաշեւ.- Ի՞նչ, գերեզմանումն է, ո՞վ է գերեզմանում:

Ահա՛հեւ.- Թաղուած է, կարող եմ ասել, կարող եմ աւելա-
ցնել, մեծ հանդիսով:

Մարտաշեւ.- (ծիծաղելով), Բայց դուք, կարծեօք... (ցոյց է տալիս
ճակատը), Ձեր վերնատունը տեղն է:

Ահա՛հեւ.- Ես ինքս էի տանում նրա զագաղը և լաց էի լինում:

Մարտաշեւ.- (կամաց), սա խելագար է (նրան), իսկ ես ձեզ կասեմ,
որ ես այսօր տեսայ նորան:

Ահա՛հեւ.- (սարսափած յետ է փախչում) Ա... ա... ո՞ւմ որտեղ:

Մարտաշեւ.- Այստեղ, մի քանի րոպէ առաջ:

Ահա՛հեւ.- (կամաց), սա գիժ է (նրան) կարող եմ աւելացնել
դուք սխալվում էք:

Մարտաշեւ.- Գենդանի է:

Ահա՛հեւ.- Ի՞նչ է պատահել, յարուժիւն է առել:

Մարտաշեւ.- Բոլորովին չի էլ մտածել մեռնելու, ձկան պէս
առողջ է:

Ահա՛հեւ.- Խարօ՛շէր, պարոն...:

Մարտաշեւ.- Ի՞նչ Խարօշէ, իմ եղբորորդին, Սերգէյ Մորդաշևը

Ահա՛հեւ.- (բաշտելով նրանից) Սա խենթ է (նրան) իմ եղբոր-
որդին էլ է կեղանի պարոն:

Մարտաշեւ.- Այս րոպէիս այստեղ էր իր կնոջ հետ:

Ահա՛հեւ.- (գնում է դէպի շորերը և գոնգի վերցնում է պաշտպանուե-
լու համար), Գիժ է:

Մարտաշեւ.- Նրանք գնացին երեխաների յետևից:

Ահա՛հեւ.- Գժուած է (հագնում է վերարկուն և կրկնափոշիկները).
Ես սարսափելի կերպով վախենում եմ գժերից,
(գնում է դէպի դուռը), պատիւ ունիմ որջունելու,
համարձակվում եմ աւելացնել, դիմէք զժատուն:

Մարտաշեւ.- (վազում է զրա յետևից և բռնում է դրան մէջ), Ի՞նչ,
ի՞նչ, ո՛չ, սպասեցէք, այժմ ես ձեզ չեմ թողնի...
ո՞վ է մեղանից գիժը:

Ահա՛հեւ.- (վախեցած) Կորայ, կորայ ես, կատաղած:

Մարտաշեւ.- Ես ձեզ հարցնում եմ՝ ո՞վ է մեղանից գիժը:

Ահա՛հեւ.- Կարող եմ աւելացնել...

Մարտաշեւ.- Իրաւունք չունենաք աւելացնելու:

Ահա՛հեւ.- Կատաղած է կատաղած:

Մարտաշեւ.- Ինչ էք լռել...

Ահա՛հեւ.- Համարձակվում եմ աւելացնել...

- Մարգարէ.- Ինչքան աւելացրիք՝ հերիք էր, այժմ էլ պակսեցրէք և պատասխանեցէք, ո՞վ է գիժը:
- Անիէ.- Երզվում եմ, որ ես չեմ:
- Մարգարէ.- Պատասխանեցէք, Ելենա Ալէքսանդրովնան...
- Անիէ.- Այրի է:
- Մարգարէ.- (կատաղած), Այրի է:
- Անիէ.- Կարող եմ աւելացնել, շատ գեղեցիկ:
- Մարգարէ.- Նա երեխաներ ունի:
- Անիէ.- Մինչև այժմ չի ունեցել, բայց յանդգնում եմ աւելացնելու...
- Մարգարէ.- Կը նշանակի իմ Սերգէյը...
- Անիէ.- Զատ լաւ երիտասարդ է, ես նորա հետ ծանօթ եմ, բայց նա բոլորովին Ելենա Ալէքսանդրովնի ամուսինը չէ:
- Մարգարէ.- (Թողնելով Ակակի ձեռքը, ծանր կերպով նստում է դիւանի վրայ) Օ, օ, օ, այս ինչ բան է... Աստուած իմ, օգնեցէք, այս ըոսէին կաթսաժահր կը լինիմ:
- Անիէ.- (վազելով դէպի նա), Թողէք, թոյլ տուէք ես թուլացնեմ ձեր փողպատը, ժիլէտը, կարող եմ աւելացնել, ձեր շապիքը:
- Մարգարէ.- Կորէք դուք ջահննամը... կը նշանակի, սո՛ւտ է այս բոլորը (բռնում է Ակակի ձեռքը, նա քաշվում է), նա պսակուած չէ:
- Անիէ.- (ձեռքի ցաւից գոռում է)
- Մարգարէ.- Պատասխանեցէք, պսակուած չէ:
- Անիէ.- Վայ, վայ, վայ, ո՛չ, պսակուած չէ:
- Մարգարէ.- Դուք ճշմարիտ էք ասում:
- Անիէ.- Վայ, վայ, վայ, երզվում եմ, երզվում:
- Մարգարէ.- (Թողնելով նրա ձեռքը), Ո՛ւր է իմ գլխարկը, ո՛ւր է

գլխարկս (Ակակ ուզում է աննկատելի կերպիւ գնալ), սպասեցէք, (բռնելով նրա ձեռքը), գնանք նորան որոնելու...

Անիէ.- Կարող եմ աւելացնելու...

Մարգարէ.- Գնանք, ձեզ ասում եմ, ճանապարհին կաւելացնէք անի դու անպիտան Սերգէյ, անի դու անպիտան թոկից փախած, ես նրանից կը հրաժարուիմ, երեսս կը դարձնեմ այդ սրիկայից:

Անիէ.- Ես համարձակվում եմ աւելացնել...

Մարգարէ.- Դու գլուխդ քարն ես տալիս, որ աւելացնում ես, իրաւունք չունենաս աւելացնելու, օյ, օյ, օյ, (քարշելով դուրս է տանում Ակակին) :

ՏԵՍԻՒԼ Ժ.

- Դիւ.- (մտնում և վայր է դնում շորերը), Տէր Աստուած, այս ինչ է պատահել մեր տանը, Սերգէյ Պետրովիչը կարգադրութիւններ է անում և կարծես իր սեպհական տան մէջը լինի, տիրուհին փակուել է իր սենեկում, հաստ պարօնը հայհոյում է, ոչինչ չեմ հասկանում:
- Սերգ. Պէրր. (վախեցած՝ դուռը կիսով չափ բաց է անում), Սո՛ւս, սո՛ւս, Լիզա...
- Լիզա.- Ինչ էք հրամայում:
- Սերգ. Պէրր. Շօրեղբայրս ո՛ւր է, քնան՞ծ է:
- Լիզա.- Այն հաստ պարօնը... նա գոռաց, ճշաց և չը գիտեմ, թէ ո՛ւր գնաց.
- Սերգ. Պէրր. Օ՜ֆֆ, այժմ մի քիչ հանգիստ եմ չունչ քաշում,

իսկ տիրունիդ ուր է:

Լիւս.- Փակուել է սենեակում:

Սերգ.Պէպր.Որ, սենեակում:

Լիւս.- Այ այն տեղ, (ձախ դուռն է ցոյց տալիս),

Սերգ.Պէպր.Լիզօշկա, դու խնդրեմ գնաս, ես տիրունուդ հետ
գործ ունիմ:

Լիւս.- Կարծես բոլորն էլ խելքները կորցրել են:

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՍԵՐԳԷՅ ՊԵՏՐՈՎԻՉ, ՅԵՏՈՅ ԽԱՐՕՇԵԻԱ

Սերգ.Պէպր. (մօտենալով դրանք), Ելենա Ալէքսանդրովնա, Ելենա
Ալէքսանդրովնա պաղատում եմ ձեզ, լսեցէք:

Խարօշեա.- (ընմի յետեից), Ինչ էք կամենում:

Սերգ.Պէպր. Խղճացէք, մի ընկալով դուրս ելէք, ձեզ մի հար-
կաւոր բան ունիմ ասելու,

Խարօշեա.- (ընմի յետեից), Թողէք ինձ հանգիստ:

Սերգ.Պէպր. Աղաչում եմ ձեզ, հօրեղբայրս գնացել է:

Խարօշեա.- (դուրս գալով), վաղուց կասէիք է...

Սերգ.Պէպր. Ելենա Ալէքսանդրովնա, իմ անբաղտութիւնը
տեսէք, որ ոչ մի տեղ չը կարողացայ ճարել:

Խարօշեա.- Ինչ ճարել:

Սերգ.Պէպր. Երեխաներ - զբօսարանում ումն որ դիմում էի՝
բոլորն էլ ծիծաղում էին (չոքելով նորա առաջ), Ելե-
նա Ալէքսանդրովնա, հիմի մենք ինչ անենք:

Խարօշեա.- Ինչ որ կամենում էք:

Սերգ.Պէպր. (մի քիչ սպասելուց յետոյ) Բայց գիտէք, մի գեղեցիկ
միտք յաջաւ իմ մէջ, չի կարելի արդեօք մէկից
ժամանակով վերցնել:

Խարօշեա.- Ի՞նչ վերցնել:

Սերգ.Պէպր. Մի գոյգ երեխայ:

Խարօշեա.- Դուք կարծէք, բոլորովին, գժուել էք:

Սերգ.Պէպր. 2է ո՞ր յետոյ մենք կը վերադարձնենք, հաւա-
տայ որ կը վերադարձնենք:

Խարօշեա.- (անտարբեր) Ախ, թողէք, խնդրեմ, բաւական է ինչ
որ կատակ արիք:

Սերգ.Պէպր. Ի՞նչ պէս թէ բաւական է, ուրեմն, ես գնամ
խեղտուիմ էլի, անձնասպանութիւն գործեմ:

Խարօշեա.- Ի՞նչու, ուղղակի՝ զղջացէք, ա՛յ, թէ ինչ հարկաւոր
է՞անել:

Սերգ.Պէպր. (յուսահատ), 2է որ նա իմ բուրգս կը զգի, ինձ
հում հում կուտի:

Խարօշեա.- Դուք փորձեցէք իմ ասածս:

Սերգ.Պէպր. (յուսահատ ման է գալիս սենեակում), Տէր Աստուած,
այս միանգամայն տանջանք է (մտածում և յետոյ
դուում է), ա, ա, ա...:

Խարօշեա.- (վեր թռչելով), Ախ, ինչպէս դուք ինձ վախեցրիք:

Սերգ.Պէպր. Գտայ, գտայ:

Խարօշեա.- Ի՞նչ գտաք:

Սերգ.Պէպր. Գտայ, գտայ, բայց երեխաներ չէ, իսկ գիտէք
ինչ... դուք հօ հօրեղբօրիցս չէք վախենում:

Խարօշեա.- Ասենք թէ չեմ վախենում:

Սերգ.Պէպր. Եւ վերջապէս քանի կոպէկ արժէ՞ ձեզ համար
նորա բարեկութիւնը (քաշուելով) բարեխօսեցէք
նրան ինձ համար. հօրեղբայրս միշտ բարի է և

քաղցր գեղեցիկ կանանց հետ, իսկ դուք այսօր
այնքան գեղեցիկ էք, այնքան գեղեցիկ, որ...

Խաբաշեան.- Յետոյ . .

Սէրգէ. Պէտք. Ասացէք նորան, որ ես արդէն զղջացել եմ, օրի-
նաւոր պաշտօն եմ ստացել, որ վերջապէս
(բեմի յետերց լսվում է Մօրդաշէի ձայնը՝ «սպասիր այս-
տեղ, ես իսկոյն կը հրամայեմ, որ դուրս բերեն այստեղ»)

Խաբաշեան.- Հօրեղբայրը . . :

Սէրգէ. Պէտք. Նրա ձայնն է, օգնեցէք, ազատեցէք (վաղվում են
բեմի այս ու այն կողմը, Սերգէյ Պետրովիչը փախչում է
դէպի ձախ, իսկ Խաբաշէին շէ յաջողում փախչել և նրան
Մօրդաշէն բռնում է):

ՏԵՍԻԼ ԺԲ.

ԽԱՐՕՁԵԻԱ ԵՒ ՄՈՐԴԱՇԵՒ

Մօրդաշէ.- Վերջապէս բռնուեցիք, տիրուհի:

Խաբաշեան.- Ի՞նչ էք կամենում:

Մօրդաշէ.- (հպարտութեամբ), Տիկին', ես բոլորը գիտեմ:

Խաբաշեան.- Իսկ ձեր գիտցածն ի՞նչ է:

Մօրդաշէ.- Բոլորը, բոլորը...

Խաբաշեան.- Ուրեմն աչքներդ լոյս...:

Մօրդաշէ.- Ի՞նչ . . աչքս լոյս, այ, գրողը տանի քեզ:

Խաբաշեան.- (ցոյց տալով դիւանի վրայ և կոտրատուելով), 2էք կա-
մենալ նստել:

Մօրդաշէ.- (վրդոված), Նստել. . ո՛չ, ո՛չ, տեսէք ի՞նչ չարաճճի

է, դեռ ինձ նստելու էլ է հրաւիրում
(սառնութեամբ և լուրջ) Ողորմած տիրուհի, ես նրա
համար չեմ եկել այս տեղ, որ երկար ու բարակ
նստեմ ձեր տանը ես, տիկին, միանգամայն հե-
ռանում եմ այստեղից և էլ ամբողջ կեանքումս
չեմ վերադառնալու... ո՛ր է Սերգէյը . . :

Խաբաշեան.- Է՛հ, ի՞նչ հարկաւոր է այդպէս տաքանալ, դեռ
գնալու ժամանակ շատ կայ, իսկ առ այժմ (կոտ-
րատուելով), նստեցէք այստեղ, այ, այստեղ, ինձ
մօտ, ինձ հետ:

Մօրդաշէ.- (կամաց մղղում է), Ըմ... ըմ... ըմ... այսինքն, յան-
դգնում եմ աւելացնել, զարմանալի կին է...:

Խաբաշեան.- (ցածր և կողմը), բայց սա ինձ դուր է գալիս (նրան)
եւ ձեզ սպասում եմ (վերցնում է մկրտան ու թուղթը
և սկսում է զոնազան բաներ կտրատել):

Մօրդաշէ.- Ըմ... ըմ... ըմ... այսինքն . . ես նախ ցանկանում
եմ իմ եղբորորդուն տեսնել:

Խաբաշեան.- Դեռ ժամանակ կայ, կը տեսնէք (կոտրատուելով),
է ի՞նչ է, դուք ինձ մօտ չէք կամենում նստել:

Մօրդաշէ.- Ըմ... ըմ... ըմ... զարմանալի է (կամաց և կողմ), բայց
ինչքան գեղեցիկ է (նրան), համեցէք, կը նստեմ,
(նստում է, բայց քաշուելով՝ երեսը միւս կողմն է ծռում)

Խաբաշեան.- (ուղղում է նրան այնպէս, որ երեսը դէպի ինքը դարձնի),
Հը, դուք չէիք կամենում նստել, այո՞. . չէի՞ք կա-
մենում, ինձ նայեցէք, իմ երեսին, այ, այդպէս . .

Մօրդաշէ.- Համեցէք նայում եմ... (մեղմ), թոյլ տուէք վեր-
ջապէս իմանալու, թէ ո՛ր է այն անպիտանը:

Խաբաշեան.- Ա՛խ, ինչո՞ւ էք դուք նրան այդպէս հայհոյում,
նա ձեզ այնպէս սիրում է, որ...

Մարտաշէն - Այն, սիրում է... իմ գրպանն է սիրում:
 Խաբշէն - Բոլորովին ոչ, մանաւանդ որ նա այժմ ստացել
 է բաւականին օրինաւոր պաշտօն:
 Մարտաշէն - Պաշտօն...
 Խաբշէն - 2500 ըուրլի ռոճիկով:
 Մարտաշէն - 2500...:
 Խաբշէն - Այն:
 Մարտաշէն - Բաս էլ նա ինձ ինչո՞ւ էր խարում:
 Խաբշէն - Է՛հ, գիտէք, ջահիլութիւն էր, սխալմունք էր...:
 Մարտաշէն - Այդ արդարանալու պատճառ չէ:
 Խաբշէն - Բայց չէ որ դուք նրան կը ներէք:
 Մարտաշէն - Երբէք, երբէք, աւելի լաւ է ես...
 Խաբշէն - (ընկելով ձեռքը), Վայ, վայ, վայ, ձեր պատճառաւ
 ես մատս կտրեցի...:
 Մարտաշէն - Իմ պտտճառով, (խղճալով), խնդրեմ ներեցէք, տէր
 Աստուած, արիւն...:
 Խաբշէն - Ինչպէս ցաւում է:
 Մարտաշէն - Ես իսկոյն, այս րոպէիս, ջուր ու ղեղ կը բերեմ:
 Խաբշէն - Հարկաւոր չէ, հարկաւոր չէ, կանցնի, աւելի լաւ
 է իմ ձեռքը բռնեցէք, իսկ ես կը կապեմ:
 Մարտաշէն - (ընկնում է կամաց նրա ձեռքը), Ի՛նչ փոքրիկ ու փափ-
 լիկ ձեռք է... էհէ, ափսոս քեզ Մորգաշէն...
 Խաբշէն - (ձեռքը կապելով), Էդ ինչ էք փրնթփրնթում:
 Մարտաշէն - Ոչինչ, հէնց այնպէս... ինչո՞ւ ինձ...:
 Խաբշէն - (կտրաւաւելով նալում է նորա վրայ), է, ինչպէս, նե-
 րում էք ձեր եղբորորդուն:
 Մարտաշէն - (զայրացած), Ո՛չ, ո՛չ, չեմ կարող:
 Խաբշէն - Վայ, վայ, վայ, ինչպէս ցաւում է, դուք ցաւաց-
 րիք իմ ձեռքս, (ոտքը գետնին խփելով), ինչու դուք

այդպէս բարկացող էք, խնդրեմ այդպէս չը լինիք
 լսում էք, (միջոց), եթէ դուք չէք ուզում ներել
 նրան, թէ որ ես ձեր տեղ լինէի...
 Մարտաշէն - Է՛հ, ինչ կանէիր:
 Խաբշէն - Նա ձեզ հարսից զրկեց, այնպէս է՝ թէ ոչ:
 Մարտաշէն - Այն, այդ պէս է:
 Խաբշէն - Դէ որ այդպէս է՝ դուք նրան բնծայեցիք հօրեղ-
 բօր կին:
 Մարտաշէն - Հա, հա, հա, այ լաւ միտք... հա, հա, հա, հա-
 նալի է, հրաշալի է:
 Խաբշէն - (տխուր), Ձեր գիւղում երեւի հարսնացուներ շատ
 կան:
 Մարտաշէն - (հառաչելով), Կան, ինչպէս չէ, մէկը 60 տարեկան
 միւսը 70, երբորդին էլ Աստուած ոտներ չի
 տուել, կան, ինչպէս չէ...
 Խաբշէն - Իսկ... ջահիլ այրի կանայք էլ կան:
 Մարտաշէն - Ջահիլ այրի կանայք չըկան, մեղանում այր մար-
 դիք երկար են ապրում:
 Խաբշէն - (ընդմիջելով), Բայց կարելի է դուք... մի ջահիլ...
 այրի կին...
 Մարտաշէն - (զարմանալով), Ջահիլ այրի կին... ես ինչ ջահիլ
 այրի եմ ճանաչում չը գիտեմ, ոչ մէկը չը գիտ...
 (ճախին խփելով), ախ, ես յիմարս (արագ ման է գա-
 լիս բնմի վրայ), ա... ա... ա... չէ որ հիանալի բան
 կը լինի, եթէ որ ճշմարիտ...
 Խաբշէն - (կամաց և կողմ), Վերջապէս գլխի ընկաւ, հասկա-
 ցաւ:
 Մարտաշէն - (կամաց), Բաս ես Մորգաշէն չեմ լինիլ, թէ որ
 այդպէս չանեմ (մօտենալով Խաբշէնին՝ կտրաւաւելով)

տիկին...

Խորհրդաւ.- (կատակով), Պարոն ...

Մարտաշէ.- Ես գտայ մի այրի կին և ես նրան ի նկատի ունիմ, նա մի գեղեցիկ զրաւիչ, բարի և աննման հրեշտակ է, մի խօսքով նա հիացրել է ինձ:

Խորհրդաւ.- Ուրեմն, փորձեցէք Ձեր բաղդը:

Մարտաշէ.- Իսկ եթէ նա ինձ մերժի...

Խորհրդաւ.- Դուք նորան հարցրեցէք

Մարտաշէ.- Հարցնեմ, համեցէք, ես պատրաստ եմ, ելենա Ալէքսանդրովնա, ես խնդրում եմ ձեր ձեռքը (կողմը), տէր իմ Աստուած, այս ինչ արի ես:

Խորհրդաւ.- (կեղծ զարմանքով), Ի՞նչ, իմ ձեռքը...

Մարտաշէ.- Էլ ի՞նչ զարմանալու բան կայ. դուք ինքներդ ինձ սովորացրիք, իսկ այժ էլ... այսինքն...

Խորհրդաւ.- Բայց այդ այնպէս անսպասելի... յանկարծ...

Մարտաշէ.- Է ի՞նչ անենք, դուք գեղեցիկ կին էք, ես նմանապէս... թու՛ք, սխալուեցի, թէ ես գեղեցիկ կին չեմ, բայց լաւ մարդ կը լինիմ, հաւատացնում եմ ձեզ (բռնելով նրա ձեռքը), ուրեմն...

Խորհրդաւ.- (կտրաւտելով), Ուրեմն...

Մարտաշէ.- Ես սպասում եմ:

Խորհրդաւ.- Ի՞նչ անհամբերն էք եղիլ:

Մարտաշէ.- Ձեմ կարող, բնութիւնս այդպէս է, ուրեմն այո՛, թէ ոչ:

Խորհրդաւ.- Իսկ թէ որ ոչ...

Մարտաշէ.- (թողնելով նորա ձեռքը՝ կողմը), Էլի ասեմ կատուի պոչ (իրան), եթէ ոչ՝ ուրեմն ոչ:

Խորհրդաւ.- Իսկ եթէ ես ասեմ, թէ պէտք է սպասել, մտածել և ձեզ լաւ ճանաչել:

Մարտաշէ.- Ինձ ինչ ճանաչել, ես ինչպէս որ կամ՝ ձեր առաջ ահա կանգնած եմ (միջոց), Ելենա Ալէքսանդրովնա, էլ միք մտածիլ, ճշմարիտ որ մտածել հարկաւոր չէ, դուք չէք սխալուիլ:

Խորհրդաւ.- Իսկ եթէ սխալուիմ...

Մարտաշէ.- Այն ժամանակ... բայց ո՛չ, այդ չի լինել... ուրեմն՝ այո՛:

Խորհրդաւ.- (ձեռքը նրան տալով), Թող ձեր ասածը լինի:

Մարտաշէ.- Ուրեմն շատ լաւ, թոյլ տուէք ինձ որպէս փեսայի՝ ձեր ձեռքը համբուրելու:

ՏԵՍԻԼ ԺԳ.

ՆՐԱՆԲ ԵՒ ԱԿԱՆԵՒ

Անիէ.- (ներս է մտնում, հանում է կրկնակօշիկները, բայց երբոր ուզում է վերարկուն էլ հանել՝ նկատում է՝ թէ ինչպէս Մորդաշէն համբուրում է Խորհրդայի ձեռքը), Օհ՛, աչքս լոյս, այս ինչ եմ տեսնում, ի՞նչ, ամօ՛թ ձեզ, (կրկնակօշիկները ձեռքն է առնում ու փախչում):

ՏԵՍԻԼ ԺԳ.

ԽԱՐՕՇԵՒԱ, ՄՈՐԴԱՇԵՒ ՅԵՏՈՅ ՍԵՐԳԷՅ ՊԵՏՐՈՎԻՉ

Խորհրդաւ.- (նրա յետեից), Ակակիյ Ակակիչ, յետ զարձէք, Ակակիյ Ակակիչ:

Մարտաշէ.- (ծիծաղում է), Թողէք թէ՛ չէ՛ էլի կսկսի աւելացնել

(վախեցած Սերգէյ Պետրովիչը ձախ դանից նայելով՝ ցոյցեր է անում Խարօշին)։

Խարօշին.- Է՛, ինչպէս եղաւ, Գորեմօզօնդ Անտիպիւիչ, նե-
րսմ էք ձեր եղբորորդուն. (Սերգէյ Պետրովիչը ներս
է գալիս բնմը և ժօռնում է նրան)։

Մարտաշ.- Բմ... բմ. . չ' արժէ նա, ճշմարիտ որ չ' արժէ։
Սերգ. Պետր. (չօղում է նրա առաջ), Իմ հօրեղբայր, սիրելի հօր-
եղբայր։

Մարտաշ.- Անունը տուր՝ փէտը վեր առ։ Է, ինչպէս է, սի-
րելի եղբորորդի, պսակուե՛լ ես...։

Սերգ. Պետր. Իմ հօրեղբայր. . .

Մարտաշ.- Երկու երեխայ ունիս...

Սերգ. Պետր. Սիրելի հօրեղբայրս, ներողութիւն. . .


Մարտաշ.- Հա, հա, հա, վեր կաց, պատրաստուիր, որ գիւղ
գնանք, բաւական էր, ինչ այստեղ թափառեցիր
ու աննպատակ թրև եկար։

Սերգ. Պետր. (ընկնում է Մորդաշի պարանոցով), Իմ հօրեղբայր, իմ
սիրուն, իմ բարի..

Մարտաշ.- (տգատուելով նրանից). Դէ՛հ բաւական է, չնորհակալ
եղիր ո՛չ թէ ինձանից, այլ քո հօրեղբօր կնոջից
(ցոյց է տալիս Խարօշային),

Սերգ. Պետր. (զարմացած), հօրեղբօր կնոջից (Մորդաշն ծիծաղում
էս ինչ բան է, ես չեմ հասկանում)։

Մարտաշ.- Հա, հա, հա, ոչինչ, ոչինչ, քեզ բաժանեցի սրա-
նից և ինքս պսակուեցի։
(վարագոյրն իջնում է)



109

